ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության այս խորհրդավոր տոնի ս. պատարագին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորության է կոչվում Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի շրջանավարտ բարեշնորհ Սարգիս սարկավագ Մելքոնյանը, որը նախօրոք պաշտպանել էր իր ավարտաճառը և հայտնել պատրաստակամություն՝ ընծայվելու սպասավորության Հայ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:

Նախորդ օրը, հոկտեմբերի 9-ին, երեկոյան, տեղի էր ունեցել «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանի, որը վկայեց նորընծայի հոգևոր և իմացական աստրաստականության ու արժանիքների մասին:

Հավարտ քահանայական կոչման արարողության, նորընծան հրապարակայնորեն արտասանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի:

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի ու քահանայական ձեռնադրության առթիվ Սուրբ Գայանե վանքում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հաւատամք»-ից, «Ողջոյն տուք միմեանց» և «Խորհուրդ խորին» շարականների երգեցողությունից հետո գերաշնորհ սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծում է նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ կոչելով նրան Տ. Սարգիս քահանա Մելքոնյան:

Հավարտ քահանայական ձեռնադրության պատարագիչ սրբազան հայրը, շնորհավորելով նորընծային, բովանդակալից քարոզ է խոսում՝ «Օրհնեալ գովեալ եւ փառաւորեալ զհրաշալի եւ Աստուածազարթ Պայծառակերպութիւնդ Քո օրհնեմք եւ փառաւորեմք» (Խորհրդատետր) բնաբանով և այն ավարտում Հովհաննես ավետարանչի «Ես եմ Հովիւն քաջ. Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11) խոսքերով:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծա քահանային՝ մաղթելով, որ նա լինի արժանի սպասավորը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Մի պահ օծման արարողությունից

Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Ծնվել է 1961 թ. հունվարի 2-ին Ղամիշլի (Սիրիա) քաղաքում:

1963—73 թթ. եղել է Լիբանանի Ջիբելի «Թուչնոց Բույն» դանիական որբանոցում:

1973—75 թթ. սովորել է տեղի Պուրճ-Համուտի Արամյան վարժարանում: Միջնակարգ կրթության դասընթացն ավարտել է Ղամիշլիի Եփրատ վարժարանում:

1977 թ. ընդունվել է Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո դպրեվանք, իսկ 1980 թ. սեպտեմբերին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1984 թ. դեկտեմբերի 25-ին գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1985 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը:

1986 թ. մարտին ավարտաճառ է պաշտպանել՝ «Բնագրային ճշգրտումներ Հայաստանյայց Եկեղեցու հին և նոր տպագիր պատարագամատույցների կամ խորհրդատետրերի» թեմայով:

Հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո նշանակվել է ծառայության Մայր տաճարի մկրտարանում որպես սարկավագ:

Տ. Սարգիս քհն. Մելքոնյանը իր քառասունքը անցկացնելու է Ս. Էջմիածնում: Այնուհետև ծառայության կմեկնի Ծվեդիայի հայոց թեմ: